Դադարեցվում են ՀՀ սահմանադրության փոփոխությունների 2020թ. ապրիլի 5-ին կայանալիք հանրաքվեի նախապատրաստման եւ անցկացման աշխատանքները (հիմքը՝ ՀՀ սահմանադրության հոդված 208. ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ հանրաքվե չի անցկացվում):


ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1030, գինը՝ 100 դրամ:

ISSN 1829-3468

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 18 ՄԱՐՏԻ 2020Թ.
№ 5 (521)


# Սյունյաց Երկիր


www.syuniacyerkir.am


*Քանզի նախընթաց*
*գղջման խոցքերով*
*Սասփիկ վիափված՝*
*հուսալքվեցի,*
*Տարակույսների հեծանով*
*ինքս ինձ ձաղկեցի ի մահ,*
*Ուստի եւ այստեղ վերստին*
*հույսին վերադառնալով,*
*Պիտի հանդգնեմ*
*գթություն շարժել,*
*Օգնության կանչել*
*մեղապանց անձիս սուրբ*
*Երրորդության:*

*ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ, ՄԱՏՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ, ԲԱՆ ԺԲ, Ա*



# Կորոնավիրուսը գրոհում է. հանրապետությունում հայտարարվել է արտակարգ դրություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

**16 մարտի 2020, 298 - Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով աշխարհում եւ Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19, այսուհետ՝ վարակ) տարածման դեպքերը եւ այդ վարակն Առողջապահության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենի՝ 2020 թվականի մարտի 13-ի հայտարարությամբ որպես պանդեմիա որակելու հանգամանքը,

հիմք ընդունելով, որ Հայաստանի Հանրապետությունում, առավելապես՝ Հայաստանի Հանրապետության Վաղարշապատ քաղաքում վարակի տարածման հետեւանքով համաճարակային իրադրությունը, որպես համաճարակի հետեւանքով առաջացած արտակարգ իրավիճակ, սպառնում է բնակչության կյանքին եւ առողջությանը եւ կարող է հանգեցնել անձանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման,

ելնելով նման արտակարգ իրավիճակում մարդկանց կյանքի եւ առողջության ապահովման գերակայության սկզբունքից, ինչպես նաեւ համաճարակի կանխարգելման, համաճարակային իրադրության պայմաններում բնակչության պաշտպանության, բնակչության առողջության պահպանման եւ առողջական վիճակի բարելավման նպատակով սանիտարականխարգելիչ, կարանտինային հատուկ միջոցառումների, վարակի տարածումը կանխելու եւ վերացնելու հատուկ պայմաններ եւ ռեժիմ սահմանելու, ինչպես նաեւ բնակչության պաշտպանության կանխարգելիչ այլ աշխատանքների եւ միջոցառումների ժամանակին, պատշաճ, օպերատիվ, արդյունավետ կազմակերպման եւ իրականացման անհրաժեշտությունից,

հաշվի առնելով, որ վարակի տարածմանն էականորեն նպաստում կամ կարող են նպաստել, իսկ կանխարգելմանը՝ խոչընդոտել այլ, այդ թվում՝ վարակված բնակչության բարձր ցուցանիշներ ունեցող երկրներից պոտենցիալ վարակակիր անձանց՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու, Հայաստանի Հանրապետության տարածքում անձանց ազատ տեղաշարժվելու, հանրային միջոցառումներին մասնակցելու, համապատասխան կանխարգելիչ միջոցառումներ, իսկ ախտանիշների առկայության դեպքում՝ բժշկական զննություն չանցնելու հանգամանքները,

հիմք ընդունելով այն, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 120-րդ հոդվածը Հայաստանի Հանրապետության կառավարությանը լիազորում է երկրում արտակարգ դրություն հայտարարել սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում եւ այն, որ վարակի տարածումը զանգվածաբար սպառնում է մարդկանց կյանքին ու առողջությանը, եւ նման արտակարգ իրավիճակը կարող է անմիջական սպառնալիք հանդիսանալ սահմանադրական կարգի համար՝ վտանգելով սահմանադրական կարգի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանված սոցիալական պետության բաղադրիչը եւ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածով սահմանված՝ մարդու, որպես բարձրագույն արժեք հանդիսանալու սահմանադրական կարգավիճակը, ինչը պետությանը պարտավորեցնում է միջոցներ ձեռնարկել անձանց կյանքի ու առողջության պաշտպանության համար,

նկատի ունենալով այն, որ վարակի տարածման սահմանների եւ դրանով վարակված անձանց թվի ավելացման պայմաններում համապատասխան կանխարգելիչ աշխատանքների եւ միջոցառումների իրականացումը եւ դրանց արդյունքում անձանց կյանքի եւ առողջության պաշտպանությունը հնարավոր


էջ 2


# ԱՀԿ-ն կորոնավիրուսը համաշխարհային համաճարակ՝ պանդեմիա է հայտարարել

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) նոր տեսակի կորոնավիրուսը համաշխարհային համաճարակ է հայտարարել: Կազմակերպության գլխավոր տնօրենը կոչ է արել կառավարություններին՝ առավել համակարգված եւ արդյունավետ քայլեր ձեռնարկել՝ սեփական քաղաքացիների առողջությունը պահպանելու համար:

Նշենք, որ պանդեմիա է համարվում անսովոր հզոր համաճարակը, որը բնութագրվում է ինֆեկցիոն հիվանդության՝ աշխարհի բազմաթիվ երկրներում տարածմամբ:

# ԻՆՉ ՍՊԱՍԵԼ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացրել է արտակարգ դրության ընթացքում կանխարգելիչ միջոցառումների, սահմանով մուտքի եւ ելքի, տեղաշարժման սահմանափակումների եւ անհրաժեշտ այլ քայլերի մասին տեղեկություններ: Ներկայացնում ենք կառավարության հրապարակած տեղեկատվությունը.

**1. Մուտքը-ելքը ՀՀ սահմանով**

- ՀՀ քաղաքացիները չեն կարող ցամաքային սահմանով լքել ՀՀ տարածքը. բացառություն կկազմեն բեռնափոխադրումներ իրականացնողները, օրինակ՝ վարորդները:
- ՀՀ քաղաքացիները, նրանց ընտանիքի անդամները (եթե նույնիսկ ՀՀ քաղաքացի չեն), Հայաստանում հաշվառված եւ բնակվող անձինք կարող են մուտք գործել ՀՀ տարածք:
- Այլ օտարերկրացիների մուտքը արգելվելու է, եթե, օրինակ, նրանք այնպիսի երկրների քաղաքացիներ են կամ վերջին 14 օրը գտնվել են այնպիսի երկրներում, որտեղ համաճարակաբանական լարված իրավիճակ է տիրում (նման երկրների ցանկը կորոշի պարետը)
- Անկախ բոլոր դեպքերից, դիվանա-


էջ 2





# Վարչապետ Նիկոլ Փաշինյանը Սյունիքում էր



Մարտի 10-11-ը, ՀՀ սահմանադրության փոփոխությունների 2020 թ. ապրիլի 5-ին նշանակված հանրաքվեի «Այո»-ի քարոզարշավի շրջանակներում, այցելել է Սյունիք եւ հանդիպումներ ունեցել Ագարակի, Մեղրու, Քաջարանի, Կապանի, Տեղի, Գորիսի, Շինուհայրի, Սիսիանի, եւ Գորհայքի բնակիչների հետ:



# Սյունիքի մարզպետարանի աշխատակիցները գտնվել են արտերկրում (2017-18 թթ.), բայց աշխատավարձ են ստացել



ՀՀ հաշվեքննիչ պալատն ուսումնասիրել է Սյունիքի մարզպետարանի 2017-18 թվականների ֆինանսական գործունեությունը:

Ուսումնասիրությունից պարզվել է, որ մարզպետարանի աշխատակազմի չորս աշխատակից 24 օր գտնվել են արտերկրում, սակայն նրանց վճարվել է 401 հազար դրամ «աշխատավարձ»:

Պարզվել է նաեւ, որ մարզի առողջապահական ու բժշկական թվով չորս կազմակերպության 43 աշխատակից 198 աշխատանքային օր (հերթափոխեր) գտնվել են արտերկրում, սակայն նրանց ներկայություններն ամրագրված են հաշվետախտակներում (տաբելներում), ինչի հետեւանքով վերջիններիս վճարվել է 1.146.204 դրամ «աշխատավարձ»:

Պարզվել է նաեւ, որ թվով 16 հանրակրթական դպրոցում 43 աշխատակից 2017-18 թթ. 862 աշխատանքային օր գտնվել է արտերկրում, վերջիններիս ներկայությունն ամրագրված է հաշվետախտակներում, սակայն հաշվարկվել ու վճարվել է «աշխատավարձ», ընդամենը՝ 3.919.240 դրամ:

Դրանից, հաշվեքննության ընթացքում, մարզի հանրակրթական դպրոցների կողմից վերականգնվել է 3.086.754 դրամ:

Այսպիսով՝ մարզպետարանի եւ նրա ենթակայության 23 հիմնարկի 92 աշխատակից 2017-18 թթ. 157 աշխատանքային օր գտնվել է արտերկրում, բայց եւ ստացել են 5.690.400 դրամ «աշխատավարձ»:

Հաշվեքննության ընթացքում պարզվել է նաեւ, որ դրամական օգնությունները խիստ կենտրոնացված են եղել մարզպետարանում եւ Կապանի բնակավայրերում:

Հիշեցնենք, որ նշված ժամանակաշրջանի մեծ մասի ընթացքում (2017 թվական եւ 2018 թ. 5 ամիս) Սյունիքի մարզպետի պաշտոնը զբաղեցրել է Վահե Ա. Հակոբյանը:

Սյունիքում հիշում են, որ նման դեպքերում այդ տղան ստուգումների արդյունքներն անմիջապես ուղարկում էր դատախազություն. նման բազմաթիվ օրինակներ կան: Եվ դա հատկապես այն մարդկանց պարագայում, ովքեր նրան լուրջ չէին ընդունում:

Հետաքրքիր է՝ պատկան մարմինները հիմա ի՞նչ վերաբերմունք կունենան հաշվեքննության արդյունքների հանդեպ:

Ոչ պակաս հետաքրքիր է մեկ այլ հարց եւս. այդ տղան եւ մարզպետարանի հայտնի մռխկած տիկինը (համապատասխան վարչության երբեմնի պետը) որքանո՞վ առնչություն ունեն նշված խեղաթյուրումները կազմակերպելու հետ:

**«Սյունյաց երկիր»**




# Կենտրոնաբական բանկը հայտարարություն է տարածել

«Բոլոր այն քաղաքացիները, որոնք ստեղծված իրավիճակի պայմաններում տարբեր անհաղթահարելի՝ իրենցից անկախ հանգամանքների բերումով վարկային պարտավորությունները պայմանագրին համապատասխան կատարելու խնդիրներ կունենան, կարող են դիմել իրենց սպասարկող բանկին:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հորդորել է առեւտրային բանկերին՝ ստեղծված իրավիճակում վարկառուների (օրինակ՝ հյուրատնային, ռեստորանային, տրանսպորտի, զվարճանքի ոլորտում գործող) վարկային պարտավորությունների հանդեպ կիրառել անհատական մոտեցում, իրականացնել հաղորդակցում՝ երկկողմանի համաձայնությամբ՝ անցանկալի արդյունքներից խուսափելու համար:

Եվս մեկ անգամ խորհուրդ ենք տալիս, որ կապ հաստատվի բանկերի եւ վարկառուների միջեւ, իսկ ձեզ հետաքրքրող այլ հարցերի համար կարող եք զանգահարել ՀՀ Կենտրոնական բանկի թեժ գծին՝ 010592697 հեռախոսահամարով»:

**Կենտրոնական բանկ**

# ԻՆՉ ՍՊԱՍԵԼ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ




էջ 1

գիտական ներկայացուցչությունները, օրինակ՝ դեսպանները, հյուպատոսական հիմնարկների եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները եւ նրանց ընտանիքի անդամները կարողանալու են մուտք գործել ՀՀ տարածք

- Միեւնույն ժամանակ պարետը, կախված կոնկրետ հանգամանքներից եւ առանձնահատուկ դեպքերում կարող է որոշել նաեւ թույլ տալ այլ անձանց մուտքը ՀՀ տարածք, որոնց արգելվում է մուտք գործել՝ համաձայն արտակարգ դրության պայմանների

**2. Կանխարգելիչ միջոցառումներ**

- ՀՀ սահմանից մուտք գործելուց հետո կատարվելու է անձանց զննություն
- ախտանիշների առկայության դեպքում իրականացվելու է հոսպիտալացում, մեկուսացում (ինքնամեկուսացում) եւ (կամ) այլ սահմանափակող միջոցառումներ,
- եթե անձը հրաժարվի նման միջոցառումներից, նրան կարող են ժամանակավորապես մեկուսացնել պարետի կողմից սահմանված համապատասխան վայրերում՝ հետազոտման, բուժման եւ վարակի տարածումը կանխելու նպատակով,
- եթե պարզվի, որ անձը ՀՀ է ժամանել այնպիսի երկրներից, որտեղ համաճարակաբանական լարված իրավիճակ է տիրում, ապա նրանք կտեղափոխվեն հատուկ նախատեսված կարանտինային վայրեր կամ նրանց կարող է հրահանգվել անցնել ինքնամեկուսացման՝ իր մշտական բնակության կամ իր նախընտրությամբ մեկ այլ վայրում՝ բացառելով այլ անձանց հետ անմիջական շփումը:

**3. Տեղաշարժման սահմանափակումներ**

Չնայած արտակարգ դրությունը հայտարարվել է ՀՀ ողջ տարածքում, բայց սահմանափակումներ կգործեն միայն այն համայնքներում եւ տարածքներում, որոնք կորոշի պարետը: Այն համայնքում, որտեղ կորոշվի մտցնել սահմանափակումներ, կգործի հետեւյալ ռեժիմը

- կգործի համայնքի տարածք մուտք գործելու եւ ելք կատարելու հատուկ ռեժիմ, որը կիսկեն ոստիկանությունը, առողջապահության նախարարության, արտակարգ իրավիճակների նախարարության, առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմնի, սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի, մարզպետարանի եւ համայնքապետարանի ներկայացուցիչները
- առաջին անհրաժեշտության ապրանքների, պարագաների, սննդամթերքի, դեղորայքի, վառելիքի մատակարարման դեպքերի, ինչպես նաեւ պարետի ցուցումով՝ արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքների վերացման եւ այլ հրատապ հարցեր լուծելու անհրաժեշտությունից ելնելով մուտքերը եւ ելքերը չեն սահմանափակվի.
- համայնքի տարածքում կարող են կատարվել անձանց մեկուսացում (ինքնամեկուսացում), ազատ տեղաշարժի նորմավորում (օրվա ժամեր, մարդկանց քանակ եւ այլն)
- անձանց բնակարաններում կամ գտնվելու վայրում սանիտարահիգիենիկ եւ հակահամաճարակային միջոցառումների իրականացում

Անձանց մոտ վարակի առկայության կասկածի կամ դրա հայտնաբերման դեպքում անձինք կտեղափոխվեն հատուկ նախատեսված կարանտինային վայրեր:

**4. Միջոցառումներին մասնակցությունը**

Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում արգելվելու է հավաքների եւ գործադուլների անցկացումը:

Բացի այդ, կարող են պարետի կողմից սահմանվել տարածքներ, որտեղ կարգելվեն այնպիսի հանրային միջոցառումներ, օրինակ՝ սպորտային, մշակութային, կրթական միջոցառումներ, ժամանցային միջոցառումները, ծննդյան (տարեդարձի), հարսանյաց (նշանադրության), թաղման միջոցառումները եւ այլն: Նման միջոցառումները կարգելվեն նման տարածքներում, եթե այդ միջոցառումներին մասնակցեն 20 եւ ավելի անձինք:

**5. Ուսումնական գործընթացը**

Բոլոր պետական, համայնքային եւ ոչ պետական հանրակրթական (այդ թվում՝ մանկապարտեզները), նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական եւ բարձրագույն ուսումնական հաստատություններում կարգելվի դասապրոցեսը: Այս արգելքը չի տարածվի հեռավար (օնլայն) ուսուցման վրա:

**6. Այլ սահմանափակումներ**

Արգելվելու են տեսակցությունները, հանձնուքների կատարումը ազատազրկման վայրերում, զորամասերում, հոգեբուժական կազմակերպություններում, տարեցներին սոցիալական ծառայություններ տրամադրող, երեխաների խնամք եւ պաշտպանություն իրականացնող հաստատություններում:

**7. Հրապարակումներ ինտերնետում եւ մամուլում**

Եթե անձինք եւ զանգվածային լրատվության միջոցները ինտերնետում, այդ թվում՝ սոցիալական ցանցերում կամ այլ ձեւով ցանկանում են տեղեկատվական նյութ տեղադրել կորոնավիրուսի վարակման առկա եւ նոր դեպքերի, անձանց առողջական վիճակի, վարակի աղբյուրների, մեկուսացվածների քանակի մասին, ապա պետք է օգտվեն բացառապես պարետատան կողմից տրամադրված պաշտոնական տեղեկատվությունից եւ հղում կատարեն դրան ու հնարավորինս վերարտադրեն այն: Նրանց հրապարակումները չեն կարող հակասել պաշտոնական տեղեկատվությանը:

Նույնը նաեւ վերաբերում է այնպիսի տեղեկություններին, որոնք հանգեցնում են խուճապի կամ խուճապային իրադրություն ստեղծելու վտանգ են պարունակում:

Նման հրապարակումները ենթակա են անհապաղ վերացման այն կատարած անձանց կողմից:

**ՊԵՏՔ Է ՀԻՇԵԼ, ՈՐ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԸ ԽԱԽՏԵԼԸ, ԱՅՍԻՆՔՆ՝ ՍԱՀՄԱՆԱՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՉԵՆԹԱՐԿՎԵԼԸ ՀԱՆԳԵՑՆՈՒՄ Է ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔԻ 1823 ՀՈԴՎԱԾԻ ՀԱՄԱՁԱՅՆ:**



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

էջ 1

չի լինի ապահովել առանց Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ երաշխավորված՝ մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների սահմանափակման, մասնավորապես, անձնական ազատության (հոդված 27), ազատ տեղաշարժվելու իրավունքի (հոդված 40), հավաքների ազատության (հոդված 44), սեփականության իրավունքի (հոդված 60) եւ արտակարգ դրության ժամանակ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանափակման ենթակա այլ իրավունքները եւ ազատությունները՝ իրավիճակի պահանջով եւ օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցնելու կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկելու, եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 76-րդ հոդվածով, 120-րդ հոդվածի 1-ին մասով եւ «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 1-ին, 3-րդ, 4-րդ եւ 8-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած մինչեւ 2020 թվականի ապրիլի 14-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով հայտարարել արտակարգ դրություն:

2. Արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող ուժերի եւ միջոցների միասնական ղեկավարումն իրականացնելու նպատակով ստեղծել պարետատուն (այսուհետ՝ պարետատուն): Պարետատան ղեկավարման համար պարետ նշանակել Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ Տիգրան Ավինյանին (այսուհետ՝ պարետ):

3. Պարետատան կազմում ի պաշտոնե ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարը, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարը, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի ղեկավարը, Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետը, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենը, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալը, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների համակարգման գրասենյակի ղեկավարը, Հայաստանի Հանրապետության առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարը եւ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարը:

4. Պարետատան աշխատանքների սպասարկումն ապահովում է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմը եւ Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ Տիգրան Ավինյանի գրասենյակը:

5. Պարետի հրավերով պարետատան աշխատանքներին կարող են մասնակցել պետական մարմինների, կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ներկայացուցիչները, նախարարությանը ենթակա մարմինների ղեկավարները, Հայաստանի Հանրապետության մարզպետները, համայնքների ղեկավարները:

6. Պարետի ցուցումները պարտադիր են պարետատան կազմի, պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարների եւ ներկայացուցիչների, ինչպես նաեւ արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովելու նպատակով օգտագործվող ոստիկանության, ազգային անվտանգության ուժերի համար:

7. Սահմանել արտակարգ դրության ժամանակ կիրառվող միջոցառումները եւ իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումները, արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող միջոցները՝ համաձայն հավելվածի:

8. Սահմանել, որ արտակարգ դրության շրջանակներում կիրառվող միջոցառումները եւ իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումները, հաշվի առնելով համաչափության սկզբունքը, կիրառվում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում կամ պարետատան կողմից որոշված տարածքների սահմաններում: Արտակարգ դրության շրջանակներում կիրառվող միջոցառումների իրականացման եւ իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումների կիրառումն ապահովելու համար պարետի ցուցումով կարող են ներգրավվել արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող՝ ոստիկանության, ազգային անվտանգության պետական լիազոր մարմինների ուժերն ու միջոցները:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**Նիկոլ Փաշինյան**

´²Ü²ÎÓÖ ºì øÜÜ²ðÎàôØ



# Իսրայել Օրիի ծննդավայրը, փարիքը եւ ընփանիքը

Æսրայել Օրին հայ ժողովրդի ազատագրական շարժումների ականավոր դեմքերից մեկն է: Նա առաջին հայ դիվանագետն է, որը համարձակ վերանայեց հայ ազատագրական շարժման քաղաքական կողմնորոշումը, ճշտեց այդ շարժման ուղիները, մեծ Ռուսաստանի մեջ տեսավ հայ ժողովրդի փրկությունը եւ նրա հետ կապեց հայերի ազատագրական հույսերն ու ակնկալությունները:

Իսրայել Օրին ռուսական հողի վրա առաջին անգամ ոտք դրեց 1701 թ., դիվանագիտական բանակցությունների մեջ մտավ ռուսական արքունիքի հետ եւ հիմք դրեց հայ-ռուսական քաղաքական հարաբերություններին:

Օրիի անձնավորության հետ կապված եւ ճշտման կարոտ խնդիրներից մեկը նրա ծննդավայրի հարցն է: Մեզ ծանոթ տվյալների հիման վրա փորձենք քննության առնել այն:

Կարմելյան քարոզիչ Ուկոնին 1709 թ. ապրիլի 2-ին Հավատի տարածման Հռոմի ժողովրդին ուղարկած իր զեկուցագրում Օրիի ծննդավայրն է համարել «Գիլանը»: Նա այդ զեկուցագրում գրել է. *«Պետք է նաեւ սույն նամակովս իմացնեմ Ձեր Գերապայծառության, որ հայ անձ մը եւ Պարսից շահին հպատակ, Գիլանի նահանգը ծնած (ընդգծումը մերն է–Ա. Ա.)... տեղս ժամանեց Պապին դրոշով՝ ինքզինքը իբր Պապին դեսպանը ներկայացնելով... իր անունը Իսրայել Օրի եւ կըսվի թե ինքը զինվոր եղած է Ֆրանսայի մեջ»*[1]: Կարմելյան քարոզիչի այս տեղեկությունն մտացածին է: Ըստ երեւույթին, նրա ծանոթ վայրը մետաքսի վաճառքով հայտնի Գիլանն է եղել, ուր եւ հարմար է համարել տեղադրել Օրիի ծննդավայրը:

Կրուշինսկին Օրիին համարում է Ղափանցի. *«Այդ ժամանակ (1708 թ. վերջերը),* – գրում է նա, – *մի դեսպան հասավ Շամախի, որը Մոսկվայի ցարի կողմից գնում էր պարսկական արքունիք: Այս ջենտլմենտի անունն էր Իսրայել Օրի... Նա ծննդով Պարսկաստանի Ղափանցի (վայրից) էր (kapanlu)»*[2]: Նույնը կրկնել են անգլիացի Հանվեյը եւ իտալացի կարմելյան կրոնավոր Ֆրա Լեանդրը: Վերջինս գրում է. *«1708-ին վերջերը ի Շամախի հասավ ռուսաց ծարին կողմանե դեսպան մը, որուն անունն էր Իսրայել Օրի, ազգավ հայ եւ ծննդյամբ Ղաբանլուցի, որ Պարսկաստանի փոքրիկ գյուղ մըն է»*[3]:

Օրիի ծննդավայրը Ղափանը համարելու այս վարկածը հանգամանորեն քննության է առել Աշ. Հովհաննիսյանը եւ հանգել է հետեւյալ եզրակացության. *«...սխալված կլինեինք, եթե, ելնելով Կրուշինսկու ինքյան արժեքավոր վկայությունից, Օրիի ծննդավայրը որոնելու լինեինք ներկայիս Ղափանի շրջանում... Ղափան անունը երբեմն ուներ նաեւ լայն իմաստ՝ ընդգրկելով Մեծ եւ Փոքր Սյունիքը, ասել է՝ Կուր եւ Արաքս գետահովիտների մեջ ընկած ամբողջ այն լեռնաշխարհը, որ Ալիշանը նշում է «Ղարաբաղ» տեղանունով»*[4]:

Աշ. Հովհաննիսյանի այս կարծիքը հաստատող փաստ կարող ենք գտնել Ստեփանոս Շահումյանցի թելադրանքով Ղուկաս Սեբաստացու գրի առած «Ընտիր պատմութիւն Դաւիթ բէգին եւ պատերազմացն Հայոցն Խափանու» երկում: Այստեղ «Խափան» տեղանունը գործ է ածված ողջ Սյունիքի համար հավաքական իմաստով:

Օքսֆորդի Բոդլեյան գրադարանի N 53 ձեռագրի հիշատակագիր Սարգիսն իր թողած հիշատակարանում գրչության վայրի մասին գրում է. *«Ես Սարգիս գրիչս եմ ի յերկրէն Ղափանայ, ի գեղջէն Գորիսոյ, որ ազդմանէ չարին փախեալ եկաք բնակեցաք ի գէօղս Բարկիս (=1657)»* [5]: Գորիսը՝ Զանգեզուրի հանրածանոթ այս բնակավայրը, ինչպես տեսնում ենք, համարվել է Ղափանի շրջանի գյուղերից մեկը: Ժամանակին այսպես է ճանաչվել Ղափանը: Անհիմն չէ պատմաբան Մ. Չամչյանը, երբ խոսելով Ղափանի մասին, գրում է. *«...եւ ոչ թոդին դոք ի թշնամեաց յաշխարհին Սիւնեաց եւ Արցախոյ, որոց սահմանք Ղափանու աշխարհ կոչին յոմանց»* [6]:

Րաֆֆին Օրիի ծննդավայրն է համարել Հնդկաստանը. *«Ղարաբաղի մելիքները,* – գրել է նա, – *դեռ 1701 թվականին ուղարկեցին Պետրոս Մեծի մոտ որպես պատգամավոր Իսրայել Օրի անունով հնդկաստանցի հային»*[7]: Որտեղի՞ց է նա քաղել այդ տեղեկությունը, մեզ հայտնի չէ: Համենայն դեպս, մեզ ծանոթ պատմական աղբյուրներով այն չի ճշտվում: Անհավանական չէ, որ մեծանուն վիպասանը Օրիին շփոթած լինի հայ ժողովրդի ազատագրական շարժման մի այլ ականավոր գործիչի՝ Հովսեփ Էմինի հետ, որի գործունեության վայրը իսկապես Հնդկաստանն է՝ նրա Կալկաթա ծովափնյա քաղաքը:

Բանասեր Ե. Գեղամյանցը Օրիի ծնողներին արցախեցի է համարում, որոնք իբրեւ թե XVIII դարում Արցախի կալվածատեր մելիքներից են եղել: Նշելով Էջմիածնի գաղտնի ժողովում Օրիի հոր՝ Իսրայելի պատգամավոր ընտրվելու փաստը, նա այդ կապակցությամբ անդրադառնում է Օրիի ծննդավայրին. *«Ընտրված աշխարհականներից մեկն էր Իսրայել անունով մելիքը: Սակայն նա, մասամբ ծերության, մասամբ էլ Խաչենում ունեցած իր կալվածից չհեռանալու պատճառով (ընդգծումը մերն է –Ա. Ա.) հրաժարվեց, բայց իր փոխարեն Օրի անունով որդուն նշանակեց»*[8]: Պռոշյան իշխանական տունն Արցախում, իրոք, տիրույթներ ունեցել է, բայց այդ եղել է շատ վաղուց՝ XIII դարում, իսկ XVIII դարում Իսրայելի մելիք լինելու եւ Արցախում կալվածք ունենալու մասին մեզ ոչինչ հայտնի չէ: Գեղամյանցը թյուրիմացության մեջ է. XIII–XIV դդ. Արցախում Պռոշյանների ունեցած տիրակալական իրավունքները նա մեքենայորեն տեղափոխել է XVIII դար:

Պատմաբան Հ. Աստուրյանը հայ ժողովրդի պատմության իր դասընթացում Օրիին համարել է Ղարաբաղցի, որը Հնդկաստանում իբրեւ թե զբաղվել է առեւտրով, բավականին հարստություն ձեռք բերել եւ նվիրել հայ ժողովրդի ազատագրության գործին. *«Վերջինս* (այսինքն՝ Իսրայել Օրին), – գրել է նա, – *ծնունդով Գարաբաղցի հայ մէր, որ Հնդկաստանի մեջ լավ դրամ վաստակած էր վաճառականությամբ եւ ճշմարիտ հայրենասիրության ոգի մը կրելու»*[9]: Աստուրյանի այս տեղեկությունը մտացածին է:

Լեւոն «Խոջայական կապիտալի» մեջ Օրիի ծննդավայրն է համարել Հին Նախիջեւանի Շահապոնք ավանը: Քանի որ Շահապոնքը հայ ունիթոռների կենտրոնն է եղել, ուստի, նրա կարծիքով, Օրին կաթոլիկ դավանանքին հարող ունիթոռ է եւ ծննդյամբ այնտեղից. *«Արդ՝ ընդունելով Շահապոնք ավանը կամ նրա մերձակա մի այլ գյուղ իբրեւ ծննդավայր Օրիի,* – գրել է նա, – *մենք դրա հետ ձեռք ենք բերում եւ երկու կարեւոր իրողություններ, որոնք կարող են բացատրել այդ մարդու կյանքի մի քանի հանգամանքները: Առաջինն այն է, որ XVII դարում Շահապոնքը հայ կաթոլիկների կամ ունիթոռների գլխավոր կենտրոններից մեկն էր, եւ ամենայն հավանականությամբ ինքն Օրին էլ մեկն էր այդ ունիթոռներից»*[10]: Հետագայում նա իր այդ կարծիքը վերանայել է «Հայոց պատմության» մեջ: *«Պռոշյան տոհմը սեփական կալվածներ ուներ Վայոց ձորում (Դարալագյազ),* – գրել նա, – *եւ նրա սահմանակից Ճահուկ գավառում: Հավանաբար, այս տեղերից Պռոշյանների մի հատված բնակություն հաստատեց Ղափանի գյուղերից մեկում, որի անունը մեզ անհայտ է մնում: Այդ անհայտ գյուղերից էր, ամենայն հավանականությամբ, Իսրայել Օրին»*[11]: Լեոյի այս ենթադրության հետ դժվար է համաձայնվել: Անկարելի է մտածել, որ ազատագրական հոգսերով տարված հայ քաղաքական բարձր շրջանները եւ լուսավորչական եկեղեցու բարձրաստիճան հոգեւորականությունը Էջմիածնում գումարված գաղտնի ժողովին կարող էին մասնակից դարձնել հայ կաթոլիկին, եւ նրա երիտասարդ որդուն լիազորել Եվրոպա մեկնել՝ դիվանագիտական բանակցություններ վարելու: *«Ինքյան իսկ անհավանական է,* – իրավացիորեն Լեոյին առարկում է Աշ. Հովհաննիսյանը, – *որ XVII դարում հազիվ միայն 40 տուն հայ-կաթոլիկ եւ մոտ հարյուր տուն մահմեդական բնակչություն ունեցող Շահապոնքը, այսինքն գրեթե մահմեդական մի գյուղ, եղած լիներ Օրիի անվանի հարազատների մղած պայքարի հանգրվանը եւ ի վերջո նույնիսկ մասնակցած Էջմիածնի սակավամարդ խորհրդաժողովին»*[12]:

Աշ. Հովհաննիսյանը հակված է Օրիի ծննդավայրը համարելու Սիսիանի շրջանի Սիսիան գյուղը. *«Հավանորեն Սիսիանն է հենց XVII դարի մեծ Ղափանի կամ Նախիջեւանի խանության այն մահալը, ուր պիտի որոնենք Օրիի ծննդավայրը»*[13]: Այս հարցում նրա հիմնական կռվաններից մեկը հայ առեւտրական Եղիա Մուշեղյանի «Անձկութիւն» խորագրով աշխատությունն է եղել: Մուշեղյանը, խոսելով իր գործընկեր Պոռեկարի մասին, նշում է, որ 1707 թ., Օրիի դեսպանության ժամանակ, նա մտած է եղել նրա շքախմբի մեջ. *«Վերոյ յիշատակեալ Հօնօռէ Պօռէկարն,* – գրում է նա, – *էր ազգաւ Ֆրանցիզ, գաւառէն Մառչիլիու: Սայ ընդ սիսիանցի Իսրայել Օռի դեսպանին (ընդգծումը մերն է – Ա.Ա.) եկել էր Ֆրանկիստանու եւ ծառայէր նմայ ի գործս տնօրէննութեան»*[14]: Մուշեղյանի այս տեղեկության հիման վրա Աշ. Հովհաննիսյանը հնարավոր է համարել, որ Օրիի ծննդավայր գյուղը եղած լինի հենց Սիսիանի շրջանի կենտրոն Սիսիան գյուղը. *«Հնարավոր է,* – գրել է նա, – *որ Մուշեղյանի հաղորդածը պարունակում է իր մեջ նույնիսկ ավելի նեղ մի իմաստ: «Սիսիանցի» հատկացուցիչը կարող էր նշանակել ոչ միայն Սիսիանի մահալից, այլեւ այդ մահալի Սիսիան գյուղից, որը ժամանակին հանդիսացել էր Սյունյաց մելիքների եւ յուզբաշիների նստավայրերից մեկը»*[15]:

Դժվար է համաձայնվել Աշ. Հովհաննիսյանի այս կարծիքի հետ հետեւյալ պատճառով: Նախ՝ պատմական տեղեկություններ չկան, որ Պռոշյան իշխանական տունը որեւէ ժամանակ տիրույթներ ունեցած լինի ներկայիս Սիսիանի շրջանում: Ապա՝ Եղիա Մուշեղյանը «սիսիանցի» ասելով նկատի է ունեցել ոչ թե ինչ-որ գյուղ, այլ՝ շրջանը, տվյալ դեպքում՝ Սիսիանի շրջան, որը միջին դարերում Սիսվան կամ Սյունիք անունով բավական լայն ընդգրկում է ունեցել. նրա վարչական կազմում, ըստ Շիրակացու «Աշխարհացոյցի», գտնվել է 12 գավառ, այդ թվում՝ Երնջակը, Ճահուկը, Վայոց ձորը, Գեղարքունիքը եւ ուրիշներ[16]: Օրբելյանի գյուղացանկի համաձայն Սյունիքի մեջ մտել են հետեւյալ 14 գավառները՝ Ծղուկ, Այլախ, Վայոց ձոր, Գեղարքունի, Սոթք, Աղահեջ, Հաբանդ, Բաղք, Քաշունիք, Կովսական, Արեւիք, Ձորք, Երնջակ եւ Ճահուկ[17]:

Որ Սիսիանը չէր կարող Օրիի ծննդավայրը լինել, այդ որոշակի երեւում է Պֆալցի կուրֆյուրիստին Օրիի հաղորդած այն տեղեկությունից, որ Էջմիածնից ճանապարհվելով դեպի Սյունիք, ճանապարհին կանգ է առել իր ծննդավայր գյուղում, իսկ հաջորդ օրը, շարունակելով ճանապարհը, հասել է Անգեղակոթ[18]: Աշ. Հովհաննիսյանը կարծում է, թե Էջմիածնից դեպի Անգեղակոթ գնալու համար ուղեւորը նախ պիտի անցնի Սիսիան ավանը, ապա մի քանի ժամ ճանապարհը շարունակելով հասնի Անգեղակոթ: Սյունիքի այդ երթուղու հետ ծա-

**ԻՍՐԱՅԵԼ ՕՐԻ (1659-1711)** Հայ ազգային–ազատագրական շարժման գործիչ: Ծագում էր Պռոշյանների իշխանական տոհմից: Իսրայել Օրու գաղափարները մեծ ազդեցություն են ունեցել ժամանակի ազգային-ազատագրական պայքարի գաղափարների ձեւավորման հարցում: Օրին հիմնել է պայքարի ռուսական կողմնորոշումը:

Սյունիքում եւ Արցախում ունենալով գաղափարակիցներ՝ նա արմատավորեց Հայաստանի ազատագրության գաղափարը նրանց մեջ: Արդյունքում իր մահից մեկ դար անց Արեւելյան Հայաստանը միացվեց Ռուսական կայսրությանը:

# ´²Ü²ìºÖ ºì øÜÜ²ðÎàôØ

նոթ ամեն մեկը գիտի, որ այդպես չէ: Բացի այդ, Սիսիան ավանից Անգեղակոթ հեռավորությունը ոչ թե մի քանի ժամվա ճանապարհի է, այլ ընդամենը կես ժամվա` ձիով:

Մեր կարծիքով, Օրիի ծննդավայրի մասին եղած կարծիքներից համոզեցուցիչը ականավոր բանասեր Գարեգին Հովսեփյանի հայտնած կարծիքն է: Նա Օրիի ծննդավայրն է համարում Վայոց ձորի Մարտիրոս գյուղը: Անհրաժեշտ ենք գտնում քննարկել Հովսեփյանի առաջ քաշած կռվանները, ինչպես եւ մեր կողմից հրապարակել նոր փաստեր:

Հովսեփյանի հիմնական կռվանն այն է, որ Օրին եղել է Պռոշյան իշխանական տան շառավիղներից մեկը, իսկ Պռոշյանների տիրույթը, ինչպես հայտնի է, գտնվել է Վայոց ձորում: Որ ժամանակակիցները Օրիին ճանապարհում էին որպես Պռոշյան, այդ երեւում է մի շարք վավերագրերից: Նշենք դրանցից մի քանիսը:

Մելիքները 1699 թ. ապրիլի 29-ին Պապին ուղարկած գրության մեջ հայտնել են նրան. *«Մենք ընտրեալ էաք զպարոն Իսրաէլն` մեր մեծատան որդի Հայաստանեաց, ի տոհմէ Պռոշ իշխանի, եւ ինք չի կարաց գալ վասն անօրինաց, եւ պատճառ այլեւայլ չի լինելոյ աղագաւն: Եվ ընտրեաց փոխարէն զիւր որդին Իսրաէլ Օրին, եւ մենք խապուլ արաք, որ դա հետ Յակոբ կաթողիկոսին»*[19]:

Մելիքների` Օրիին տված հավատարմագրում նշվում է, որ Օրին *«...ծագում է Պռոշ իշխանի պայծառ ընտանիքից» (qui ducit originem ex familia principum Broshensium)* [20]: Ասվում է նաեւ, որ Օրին, իր ազնիվ նախնիների օրինակով, 19 տարի շարունակ հետամուտ է եղել հայ ժողովրդի ազատագրության գործին, եւ որ այդ տան երեք հայրենասեր ներկայացուցիչներ նահատակվել են թշնամիների ձեռքով:

Նույն մելիքները 1699 թ. ապրիլի 29-ին Պետրոս I-ին ուղարկած գրության մեջ Օրիին ներկայացրել են որպես Պռոշյան իշխանական տոհմի զավակ. *«Դարձեալ մենք յառաջ ընտրեր էաք Հայաստանեացս մեծատունն զպարոն Իսրաէլն ի տոհմէ Պռոշ իշխանի որ գան առ ձեր թագաւորութեանն, եւ ի ահէ անօրինացն ոչ եղեւ գալ ինք, իւր փոխարէն զիւր որդին առաքեց, մենքլ խապուլ արինք»*[21]:

Ստեփանոս Ռոշքան, որն անձաբ հանդիպում է ունեցել Օրիի հետ եւ թարգմանել է մելիքների` Պապին ուղարկած գրությունը, Օրիի մասին հետեւյալն է գրել. *«Իսրայէլ օրին Պերօշ իշխանի որդին, ընդ իւր բերեալ զՄինաս վարդապետն Խարբերդցի եկն ի Հռոմ...»*[22]:

Որ Օրիի հայրն Անդրկովկասի ազատագրական շրջաններում ճանաչված մեկն է եղել, այդ որոշակի երեւում է Մոսկվայում 1701 թ. հուլիսի 13-ին Դեսպանական վարչությունում (Посольский приказ) Օրիի արած հայտարարությունից. *«Հույս ունի ինքը,* – ասել է նա, – *որ Արչիլ թագավորին եւս հայտնի է հայերի նախկին դիտավորությունը (խոսքն ազատագրական շարժումների մասին է – Ա. Ա.), թե ինչպես դեռ իր հայրը` Իսրայելը, 23 տարի առաջ նույն գործի համար ուղարկված է եղել եւ Ցարգրադից (=Կ. Պոլսից) պատերազմի պատճառով վերադարձել է, նմանապես նրան հայտնի պիտի լինի Իսրայելի ընտանիքը (ընդգծումը մերն է – Ա.Ա.): Եվ ինքը կամենում է տեսակցել Արչիլի հետ, եթե այդ բարեհաճի բոյարին Ֆեոդոր Ալեքսեեւիչը (այսինքն` պետական կանցլեր Գոլովինը – Ա. Ա.)»*[23]:

Եթե Արչիլին հայտնի չլինեին Էջմիածնի գաղտնի ժողովում ընտրված պատգամավորության ժամանումը Վրաստան եւ նրա վարած բանակցությունները վրացական քաղաքական շրջանների հետ, կամ եթե Արչիլը անձամբ ճանաչած չլիներ Օրիի հորը որպես հասարակական-քաղաքական գործչի, անկարելի է կարծել, որ Օրին կարող էր համարձակվել նման հայտարարությամբ հանդես գալ արքունիքի Դեսպանական վարչությունում, քանի որ այդ նույն ժամանակ Արչիլը գտնվում էր Մոսկվայում եւ դժվար չէր ստուգել նրա հայտարարության հավաստիությունը:

Վերջապես, Աղվանից Եսայի կաթողիկոսը, Պետրոս Մեծին 1721 թ. ապրիլի մեկին ուղարկած գրության մեջ խոսելով Օրիի անցյալ գործունեության մասին, նրան անվանել է «մեծազգի» եւ «մելիքզադայ». *«Ահա այս ԻԲ (=22) ամ աւելի է,* – գրել է նա, – *որ Նահապետ մեծ պատրիարգն Վաղարշապատու իւր արքեպիսկոպոսօք եւ ազատ որդովք եւ ես նուաստս իմ եպիսկոպոսօք եւ մելիքովք այսմ խնդրանաց եւ խորհրդեան կամք մեր մեծազգի եւ մէլիքզատայ եւ ձեր մեծութեան էլչի Իսրայել Օռին...»*[24]: Անկարելի է, որ Եսայի կաթողիկոսը չիմանար Օրիի մասին եւ առանց լավագիտակ լինելու, նրան մեծազգի մարդկանց շարքը դասեր: Ճիշտ է, Եսայի կաթողիկոսը չի ասում, թե Օրին Պռոշյան իշխաններից է, սակայն նրա օգտագործած «մեծազգի» եւ «մելիքզադե» որակումները իշխանից ցածր ազնվական աստիճան չեն ցուցանշում:

Այսպիսով, վերը բերված տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ Մելիք Իսրայելը ազատագրական շրջանակներում ճանաչված է եղել որպես Պռոշյան իշխանական տան շառավիղ:

Պատմական գիտությունների դոկտոր Պ. Հարությունյանը քննադատել է Գ. Հովսեփյանին, Լեոյին եւ նրանց կարծիքը բաժանող մյուս պատմաբաններին այն բանի համար, որ նրանք Օրիին Պռոշյան իշխանական տան շառավիղ են համարել[25]:

Չենք ժխտում, որ Օրին կարող էր եւ սերված չլիներ Պռոշյաններից, ազնվական չլինել եւ իրեն Պռոշյանների հետ կապելով նպատակ ունեցած լիներ քաղաքական ասպարեզում դիրք եւ հեղինակություն շահել:

Պատմության մեջ նման օրինակներ ունենք: Սակայն այդ դեպքում ինչպե՞ս գնահատել ժամանակակից մելիքների, Եսայի կաթողիկոսի Արչիլ թագավորի, Ռոշքայի եւ այլոց վկայությունները: Կարո՞ղ ենք նրանց բոլորին համարել կեղծարարներ: Վերջապես, չպետք է կարծել, թե քաղաքական եւ եկեղեցական բարձր շրջաններ մասնակից չէին ժողովրդի ազատագրական շարժումներին եւ այդ գործի բանագնացը անպայման պիտի լիներ ոչ ազնվական մեկը:

Բոլորովին սխալ ենք համարում Հ. Քյուրտյանի` Օրիին տված գնահատականները` վերջինիս ծագման հարցը քննելու կապակցությամբ[26]:

Պռոշյանների տիրույթը, ինչպես ասացինք, գտնվել է Վայոց ձորում: Մեզ հայտնի չեն փաստեր, որ Պռոշյանները հաստատված լինեին Հայաստանի մի այլ շրջանում: Հայտնի է նաեւ, որ Մարտիրոսը Վայոց ձորի այն գյուղերից մեկն էր, որի հետ սերտորեն կապված է եղել Պռոշյանների տունը. այն եղել է նրանց ամառանոցը: Բավական է ասել, որ Մարտիրոս գյուղի շրջակայքում մեզ հայտնի է պատմական չորս հուշարձան Պռոշ իշխանի անվան հիշատակությամբ, չենք խոսում դեռ այդ տան մյուս ներկայացուցիչների մասին, որոնց անունները հիշատակված են գյուղում եղած հուշարձանների արձանագրություններում: Պռոշ իշխանի անունը կա Ս. Աստվածածնի վիմափոր եկեղեցու հարավային եւ արեւմտյան պատերի, վիմափոր եկեղեցիների դիմաց` գետակի ձախ ափի բլրակի վրա գտնվող գերեզմանատան խաչքարի, գյուղամիջի հուշարձանի պատվանդանի, Աստվածածնի եկեղեցու մուտքի քարի վրա: Պռոշյանների անվան հիշատակությամբ արձանագրություններ կան Մարտիրոսի հարեւան Գյումուր եւ Փաշալու գյուղերում[27]: Պատահական չէ, որ Հովսեփյանը, ձեռնարկելով Պռոշյաններին նվիրված իր հետազոտությունը, փաստական նյութերի տվյալների հիման վրա Օրիի ծննդյան վայրն է համարել Մարտիրոս գյուղը:

Իր` Օրիի պատմածից հայտնի է, որ Էջմիածնից դեպի Անգեղակոթ գնալու ճանապարհին նա կանգ է առել հայրենի գյուղում, գիշերել է քրոջ եւ եղբայրների մոտ` գաղտնի պահելով իր ինքնությունը: Նա հագած է եղել լեհ սպայի հագուստ եւ կապած Արեւելքում անսովոր փողկապ: Քույրը եւ եղբայրները, տեսնելով օտարականին, հետաքրքրվել են նրանով: Անհրաժեշտ ենք համարում Օրիի զեկուցագրից բերել այն հատվածը, որն անմիջապես վերաբերում է նրա հայրենի տանը եւ քրոջ հետ ունեցած զրույցին:

*«Քույրս,* – պատմում է Օրին, – *տեսնելով որ եկողը մի օտարական է, հարցրեց, թե` «Որտեղացի է նա»:*

*– Ես ասացի` Երեւանից:*

*– Նա ինձ ասաց, թե` այս երկրում ամենեւին այս տեսակ շորեր չեն հագնում:*

*– Պատասխանեցի թե` գալիս եմ Եվրոպայից:*

*– Այդ բանը նրան ուրախացրեց, եւ նա հարցրեց` ո՞ր երկրից:*

*– Ես անվանեցի բոլոր տեղերը, բայց նա ոչ մեկի մասին ծանոթություն չուներ, իսկ երբ ամենից առաջ տվի Ֆրանսիայի եւ Փարիզի անունները, նա սկսեց լաց լինել եւ ինձ հարցրեց` «Չե՞մ տեսել արդյոք մի երիտասարդ հայի այդ երկրներում:*

*– Հարցրի թե` քանի՞ ժամանակ է, որ նա հեռացել է այստեղից:*

*– Եվ նա պատասխանեց թե` մոտավորապես քսան տարի է:*

*– Ես նրան ասացի, թե` քսան տարվա ընթացքում մի մարդ չի կարող միշտ երիտասարդ մնալ: Բայց այնտեղ ես տեսա, – ասացի, – մոտ քառասուն տարեկան մի մարդ, որն ինձ ասաց թե` նա այս նահանգից է:*

*– Հետո նա հարցրեց, թե` ի՞նչ ձեւի մարդ էր նա եւ ի՞նչ ազգության էր:*

*– Պատասխանեցի. Տիկին, տեսքով նա ինձ նման է, նա թուխ է, ինչպես ես:*

*– Նա ասաց, Ո՛չ, նա ավելի բարձրահասակ էր, քան դուք եւ այդքան թուխ չէր:*

*– Ինչ վերաբերում է ազգանունին, ես լսել եմ նրա խոսքը, թե նա Իսակ կամ Օրի տոհմից է:*

*– Գուցե Իսրայե՞լ:*

*– Ես ասացի նրան. Այո՛, Իսրայել:*

*– Նա ասաց. եթե այս ճիշտ է, դու իմ եղբայրն էս:*

Միաժամանակ նա լաց լինելով դուրս գնաց եւ ներս բերեց իմ եղբայրներին, եւ մի րոպե տունը այնպես լցվեց մարդկանցով, որոնք ուզում էին նորություններ իմանալ այդ կողմից, որ ես չգիտեի` ում պատասխանել: Իմ եղբայրները չկամեցան հավատալ իմ ասածներին եւ ասացին իմ քրոջը. *«Չպետք է հավատալ ընծայել այս մարդու ասածներին, նա այս ու այն կողմերում լսել է, թե մենք եղբայր ենք կորցրել եւ եկել է մեզ ասելու, թե տեսել է նրան, որպեսզի մի քանի դրամ ստանա, ինչպես շատերն են արել...:*

*Մյուս օրը (ապրիլի 5-ին) ես իմ եղբորս մոտ էի, որին ասացի, թե` շուտով գնում եմ Ֆրանսիա եւ եթե նա կամենում է նամակ բերել իմ եղբորից, ես ձեզ հինգ հարյուր ոսկի (դուկատ) կտամ, եւ իմ եղբայրներս դարձյալ այդքան, այնպես որ դուք ձեր ամբողջ կյանքը կանցկացնեք իբրեւ մի պարկեշտ մարդ:*

*Սրանից հետո նա ինձ ցույց տվեց մի նամակ` թվագրված ութսուն եւ չորս տարեթվով, որ ես նրան գրել էի Փարիզից: Ահա ինչպես թագնվեցա իմ եղբոր մոտ, առանց ինձ ճանաչել տալու: Մեկնելիս (ապրիլի 6-ին, 1699 թ. ) ես թողի անկողնի մեջ մի ժամացույց եւ մի քանի մեդալներ` փաթաթված թղթի մեջ»*[28]:

Ըստ Օրու տեղեկության, 1699 թ. ապրիլի 6-ին նա իր հայրենի գյուղից մեկնել է եւ հասել Անգեղակոթ: Երեւանից դեպի Սիսիան գնացող ճանապարհին անցնում է Վայոց ձորով: Այդ ուղու վրա, որ գյուղն էլ որ վերցնելու լինենք` Փաշալու, Գնդեւազ, Կեչուտ եւ այլն, ամենից մոտիկը Մարտիրոսն է. այդ գյուղից ճանապարհին անցնում է նախ դեպի Բազարչայ, հետո` Ղալաջղուջ (այժմ ավերակ), ապա` մտնում Անգեղակոթ:

Ի դեպ Գարեգին Հովսեփյանի տեսակետը Օրիի ծննդավայրի մասին, պաշտպանել են պրոֆ. Հ. Հարությունյանը 1945 թ. հրատարակած «Իսրայել Օրի» վերնագրով գիտա-հանրամատչելի գրքույկում[29] եւ արձակագիր Ս. Այվազյանը «Ճակատագիրն Հայոց» վեպում[30]:

Որ Օրիի ծննդավայրը Մարտիրոս գյուղն է, ապացուցվում է այլ փաստերով եւս, որոնց վրա կուզենայինք կանգ առնել:

Սյունիքի մելիքները Պֆալցի կուրֆյուրստին ուղարկած 1699 թ. ապրիլի 29-ին իրենց գրության մեջ, ցանկանալով ավելի ակնբախ դարձնել Պռոշյանների իշխանական տան ժառանգների բարեմասնությունները, իբրեւ նվիրված քրիստոնյանների, մատնացույց են արել այդ տան երեք շառավիղների նահատակության փաստը: Նրանք գրել են. *«Ձերդ կայսրընտիր բարձրությունը իր նամակին մեջ շնորհը կընե պարոն Օրիին, անոր գովեստ ընելով իր լավ կամեցողության, ընտիր եռանդին եւ խոհեմ վարմունքին, իր ձեռնարկներուն մեջ, շատ ճիշտ է, որ ի առաքինությունը եւ արժանիքը իր շատ պանծալի ծնունդին, ինչպես նաեւ տառապանքը եւ մարտիրոսությունը կպատկանի նույնքան նշանավոր իր տան, մենք արդեն տեսած ենք նկատելի կերպով ուժեղ տրված կարծիքը իր մասին*[31]*, բոլորովին արվեստակյալ: Ասոր համար, շնորհիվ Ձերդ Կայսրընտիր բարձրության, երկու խոսք կըսենք ի նպաստ իրեն, որ մենք տեսած ենք իր շատ նշանավոր տան երեք անդամներուն մարտիրոսացումը` կրոնքի համար: Առաջինը մելիք Մարտին` քարակոծելով այրեցին, անհավատէ մը ետ առնելէ վերջ գետին մը եւ վերադարձնելով քրիստոնյայի մը` որուն կպատկաներ, եւ անմիջապես հետո (երկրին սովորության համաձայն) քրիստոնյաները հիշյալ մելիք Մարտինը սուրբերու կարգ դասեցին: Երկրորդն էր` մելիք Աղաճանը, որ իր պալատին մեջ կտոր կտոր ըրին: Վերջապես` երրորդին` Քարախան կոչված` գլուխը կտրեցին: Այս կատաղությունը եւ սաստիկ բարկությունը դեռ չհանդարտած` այս չար մարդիկը նույն ձեւով եւ նույն պատճառով կուզեին սպանել նաեւ մելիք Իսրայելը` պարոն Օրիի հայրը, սակայն չհաջողեցան իրենց նպատակին հասնել, անոնք թունավորեցին զինքը...»*[32]:

**ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ**

**Պրոֆ. Ա.Դ. Աբրահամյան**
**ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ, N2, 1977**

**Ծանոթագրություն**

1. Հ. Քյուրտյան, Իսրայել Օրի, Վենետիկ, 1960, էջ 172:
2. The History of the Rvolution of Persia, Father Krusinski, Dublin, 1719, 15 127:
3. «Բազմավեպ», 1914, N 1, էջ 30:
4. Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գ. Բ, Երեւան, 1959, էջ 230:
5. Տիրայր եպիսկոպոս, Ցուցակ ձեռագրաց Օքսֆորդի Բոդլեյան գրադարանի, ձեռ. N 53 (հմմտ. Աշ. Հովհաննիսյան, դրվագներ, գ. Բ, Էջ 235):
6. Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատ. III, Վենետիկ, 1786, էջ 788:
7. Րաֆֆի, Երկեր, հատ. X, Երեւան, 1959, էջ 180:
8. Ե. ք. Գեղամյանց, Իսրայել Օրին եւ իր քաղաքական ծրագիրը, Բագու, 1914, էջ 10:
9. Հ. Աստուրյան, Պատմություն Հայոց, Բուենոս-Այրես, 1947, էջ 353:
10. Լեո, Խոջայական կապիտալ, Երեւան, 1934, էջ 177:
11. Լեո, Հայոց պատմություն, հատ. III, գ. II, Երեւան, 1973, էջ 31:
12. Աշ, Հովհաննիսյան, Դրվագներ, գ, Բ, էջ 240-241:
13. Նույն տեղում, էջ 238:
14. Հ. Ոսկանյան, Եղիա Աստվածատրյան Մուշեղյան եւ իր գրական արտադրությունը (տե՛ս «Հանդես ամսօրյա», 1927, էջ 38: Ձեռագիր Վիեննայի մատենադարանի N 980, թ. 225բ-226ա): Մենք օգտվել ենք տվյալ ձեռագրի մանրաժապավենից, որը ստացել ենք Վիեննայի Մխիթարյաններից:
15. Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ, գ. Բ, էջ 238:
16. «Անանիա Շիրակացու մատենագրությունը», Երեւան, 1944, էջ 350:
17. Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգի Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 509-523:
18. Г. А. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, документы, СПб, 1898, վավ. N 11, էջ 52 (այսուհետեւ` Эзов, Сношения):
19. Հ. Քյուրտյան. նշվ. աշխ., էջ 34:
20. Эзов, Сношения, վավ. N 3, էջ 6:
21. Նույն տեղում, վավ. N 6, էջ 17:
22. «Ստեփանոսի Ռօշքայյ, ժամանակագրութիւն կամ տարեկանք եկեղեցականք», Վիեննա, 1964, էջ 190:
23. Эзов, Сношения վավ. N 42, էջ 84:
24. Աշ. Հովհաննիսյան, Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը, Էջմիածին, 1921, հավելված, վավ. N 14, էջ XXXIII:
25. П. Т. Арутюнян, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, М., 1954, 143-144:
26. Հ. Քյուրտյան, նշվ. աշխ., էջ 22:
27. «Դիվան հայ վիմագրության», պրակ III, կազմից` Ս. Գ. Բարխուդարյան, Երեւան, 1967, էջ 179-191:
28. Эзов, Сношения, վավ. N 11, էջ 51-52 (հմմտ. Լեո, Հայոց պատմություն, հատ. III, գ. II, էջ 38-39):
29. Հ. Հարությունյան, Իսրայել Օրի, Երեւան, 1945, էջ 43:
30. Սուրեն Այվազյան, ճակատագիրն Հայոց, Երեւան, 1966:
31. «Իր մասին» կրկնված է:
32. Эзов, Сношения, վավ. N 4, էջ 12-13: Օգտվել ենք Քյուրտյանի թարգմանությունից (տե՛ս նշվ. աշխ., էջ 41-42):

# Սյունիքում կա անհանգստություն, բայց ոչ խուճապ

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ**

**Հարգելի՛ քաղաքացիներ**

Ելնելով նոր կորոնավիրուսային հիվանդության տարածման հետ կապված հանրապետությունում ստեղծված իրավիճակից եւ մեր մտահոգությունից, հիվանդության կանխարգելման համար պայքարում անչափ կարեւորելով յուրաքանչյուր անհատի անձնական բարձր գիտակցությունը, լուրջ մոտեցումը, պատասխանատվությունը՝ խնդրում, պահանջում եւ կոչ ենք անում:

**Մեր բոլոր քաղաքացիներին՝**

- զերծ մնալ ու խուսափել զանգվածային միջոցառումների (հարսանիք, նշանդրեք, ծնունդ, հուղարկավորություն եւ այլն) ու մարդկային մեծ կուտակումների, հավաքների մասնակցելուց:
- Հատկապես ուշադիր լինել ու սահմանափակել երեխաների ու 60 տարեկանն անց եւ խրոնիկ հիվանդություններով անձանց շփումները:
- Տնից դուրս գալ միայն խիստ անհրաժեշտության դեպքում՝ պահպանելով սեփական անվտանգության, հիգիենիկ, ախտահանիչ միջոցառումների իրականացումը:
- Սուր շնչառական վարակների նշանների դեպքում (չոր կտրուկ հազ, 37 աստիճանից բարձր ջերմություն, շնչահեղձություն) ինքնամեկուսանալ ու չզբաղվել ինքնաբուժությամբ, անհապաղ հեռախոսով կապվել ձեր ընտանեկան բժշկի կամ տարածքային պոլիկլինիկայի բժշկի հետ՝ բուժման հետագա գործողությունները կազմակերպելու համար:
- Չայցելել նաեւ ոչ պարենային խանութներ, հանրային սպասարկման օբյեկտներ (գեղեցկության սրահներ, արհեստանոցներ եւ այլն):
- Հատկապես գյուղական բնակավայրերի բնակիչներին տեղեկացնում ենք, որ բոլոր համայնքներում ստեղծված են մոբիլ խմբեր, որոնցում ընդգրկված են նաեւ ձեր վարչական ղեկավարներն ու գյուղական բուժաշխատողները, եւ ինչ-ինչ հարցերի կամ խնդիրների դեպքում անմիջապես դիմեք նրանց:

**Հանրային տրանսպորտային միջոցներ շահագործող անհատներին եւ ուղեւորափոխադրում իրականացնող կազմակերպություններին՝**

- ապահովել շահագործվող տրանսպորտային միջոցների ընթացիկ ախտահանումը երթի սկզբում եւ վերջում ու համալիր ամբողջական ախտահանումը՝ աշխատանքային օրվա ավարտից հետո: Ապահովել վարորդներին ախտահանիչ եւ անհրաժեշտ այլ պարագաներով, վերահսկել նրանց կողմից անվտանգության կանոններին հետեւելը:

Իսկ բնակիչներին կոչ ենք անում՝ տրանսպորտային հանրային միջոցներից օգտվել խիստ անհրաժեշտության դեպքում:

**Հանրային սննդի օբյեկտներին (ռեստորաններ, սրճարաններ, արագ սննդի կետեր, ժամանցի այլ վայրեր)՝**

- զերծ մնալ զանգվածային միջոցառումներ կազմակերպելուց, իսկ անհնարինության դեպքում՝ ապահովել ախտահանման բոլոր միջոցառումները, աշխատակիցների՝ հիգիենիկ կանոններին հետեւելը, սննդամթերքի անվտանգության նորմերը:
- Մանրածախ առեւտրային օբյեկտներին (խանութներ, սուպերմարկետներ, առեւտրի կետեր)՝
- պարբերաբար ախտահանել բոլոր կոշտ մակերեսները, ապահովել խանութներում աշխատակիցների անվտանգ վարքը, նրանց՝ շնչադիմակով եւ ձեռնոցներով լինելը, հնարավորինս կազմակերպել նաեւ ելումուտ անող հաճախորդների հանդեպ ախտահանող միջոցառումների կիրառումը:

**Բոլոր գործատուներին՝**

- հնարավորության դեպքում 60 տարեկանն անց ու խրոնիկ հիվանդություններ ունեցող աշխատակիցների աշխատանքը կազմակերպել հեռահար եղանակով՝ տնից, բացառել սուր շնչառական վարակներով աշխատակիցների ներկայությունը:
- Հիմնարկներում աշխատակիցներին ապահովել ախտահանիչ նյութերով եւ անվտանգության համար անհրաժեշտ այլ պարագաներով: Մշտապես կատարել կոշտ մակերեսների ախտահանում:

**Հարգելի՛ քաղաքացիներ,**

տեղեկացնում ենք որ մարզի բժշկական կենտրոններն աշխատում են շուրջօրյա ռեժիմով եւ ապահոված են բոլոր անհրաժեշտ միջոցներով՝ բնակչության բուժսպասարկումն իրականացնելու հարմար:

Հորդորում են նաեւ հետեւել ԲԿ-ներում հիվանդատեսության արգելքին ե՛ւ ձեր, ե՛ւ հարազատների անվտանգության համար: Հայտնում ենք, որ հիվանդանոցներում ստեղծված են սննդի ընդունման համար սանիտարական կետեր, ու հիվանդներին սնունդը փոխանցեք միայն այդ տարբերակով:

Լինե՛նք զգոն ու պատասխանատու՝ գիտակցելով, որ յուրաքանչյուրիս այս կանոններին հետեւելուց է կախված հիմնախնդրի հաղթահարման հաջողությունը:

Եվ վերջում՝ եւս մեկ անգամ կոչ ենք անում հետեւել ու տարածել բացառապես պաշտոնական աղբյուրների տեղեկատվությունը, չկատարել չստուգված փաստերով գրառումներ ու անհարկի խուճապ չառաջացնել:

**ՀՀ Սյունիքի մարզպետարան**

## Հոգ տարեք ձեր առողջության մասին եւ պաշտպանեք մյուսներին




*ՀՀ առողջապահության նախարարի հաղորդման համաձայն՝ կորոնավիրուսի մեկ դեպք է արձանագրվել Մեղրի քաղաքում՝ Իտալիայից վերջերս վերադարձած ՀՀ քաղաքացու մոտ:*

## ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԱԽՏԱՆՇԱՆՆԵՐԸ



# Լարվածություն կա, խուճապ՝ ոչ. ինչ իրավիճակ է Կապանում



*§Ø եր տարածքում դեռ պարետ չկա, մենք գիտենք, որ գլխավոր պարետը Տիգրան Ավինյանն է: Համայնքապետարանը աշխատում է, 60-ն անց աշխատողներին ուղարկել ենք տուն, աշխատանքի չեն գալիս, եթե առողջական խնդիրներ ունեցող մարդիկ են, իրենք եւ չեն գալիս աշխատանքի»,* – «Հրապարակի» հետ զրույցում, պատասխանելով հարցին, թե ունե՞ն տարածքային պարետ, եւ աշխատո՞ւմ է համայնքապետարանը, պատասխանեց Կապանի քաղաքապետ Գեւորգ Փարսյանը:

Փարսյանին հարցրինք, թե քաղաքում կա՞ն առաջին անհրաժեշտության պարագաներ՝ դիմակներ, ալկոգել եւ այլն.

*«Ամեն ինչ ունենք, ալկոգելն էլ ունենք, դիմակներն էլ ունենք, ձեռնոցներ, քլոր, ամեն ինչ ձեռք ենք բերել: Ամեն օր, օրը 2 անգամյա ռեժիմով ախտահարվում է քաղաքային տրանսպորտը: Մեզ մոտ նորմալ է, փողոցներում մարդիկ կան, խուճապ չկա, բնական է՝ մի քիչ լարվածություն կա, բայց ընդհանուր առմամբ խուճապ չկա: Մեզ մոտ դեռ որեւէ էպիզոդ դեպք էլ չկա գրանցված, հիվանդության գրանցված դեպք չունենք»,* – պատասխանեց Փարսյանը:

■

## ՀՀ ԿԳՄՍՆ-ն հայտարարում է




- ՀՀ ԿԳՄՍՆ-ն Տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) գիտելիք եւ հմտություն ունեցող մասնագետներին առաջարկում է ստեղծել ուսումնական առարկաների հեռավար առարկայական դասընթացներ:
- Դասընթացները պետք է մշակվեն ուսումնական պլանին համապատասխան, պարտադիր ունենան տեսադասի բաղադրիչ եւ վարվեն Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի հեռավար ուսուցման համակարգում:
- Դասընթացների ստեղծման հայտերը պետք է ուղարկվեն մինչեւ մարտի 19-ը heravar@ktak.am էլեկտրոնային հասցեին:

# Արգելվել է 16 երկրից օտարերկրյա քաղաքացիների մուտքը Հայաստան




**Հարգելի՛ հայրենակիցներ,**

Ելնելով մի շարք երկրներում կորոնավիրուսի տարածումով պայմանավորված համաճարակաբանական լարված իրավիճակով՝ այսօր որոշել եմ արգելել 16 երկրներից օտարերկրյա քաղաքացիների մուտքը Հայաստանի Հանրապետություն:

Իսկ այդ երկրներից վերադարձող ՀՀ քաղաքացիները պետք է ենթարկվեն 14-օրյա կարանտինային կամ ինքնամեկուսացման ռեժիմի:

**Երկրների ցանկն է.**

1. Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն
2. Իրանի Իսլամական Հանրապետություն
3. Հարավային Կորեա
4. Ճապոնիա
5. Իտալիա
6. Իսպանիա
7. Ֆրանսիա
8. Գերմանիա
9. Շվեյցարիա
10. Դանիա
11. Ավստրիա
12. Բելգիա
13. Նորվեգիա
14. Շվեդիա
15. Նիդերլանդներ
16. Միացյալ Թագավորություն

Չի սահմանափակվելու այդ երկրներից բեռնափոխադրումներ իրականցնող տրանսպորտային միջոցի վարորդի ու փոխարինող մեկ վարորդի մուտքը Հայաստան, եթե վերջիններիս մոտ վարակի ախտանշաններ չեն հայտնաբերվել:

Բացի այդ, օտարերկրյա ուղեւորություններից վերադարձող մեր բոլոր քաղաքացիները պետք է ինքնամեկուսացվեն 14-օրյա ժամկետով: Ինքնամեկուսացման ընթացքում հիվանդության ախտանիշներ առաջանալու դեպքում պետք է անհապաղ կապ հաստատել 060 838300 թեժ գծի միջոցով:

Հայցում ենք բոլորիդ ներողամտությունը պատճառած անհարմարության համար: Համոզված եմ՝ առկա է համընդհանուր գիտակցում, որ այս քայլերը ձեռնարկում ենք բացառապես հանրության անվտանգությունն ապահովելու նպատակով:

**Տիգրան Ավինյան**



# Որ բանկերն են վարկային արձակուրդ փվել, որոնք՝ ոչ. ամբողջական ցանկ

Կորոնավիրուսի համաճարակից անհանգստացած քաղաքացիներից բացի՝ կա եւս մեկ անհանգիստ անձանց խումբ՝ բանկերում եւ վարկային կազմակերպություններում վարկեր ունեցող քաղաքացիները: Այս օրերին Կառավարության ղեկավարի մակարդակով հայտարարվում է Հայաստանում ֆինանսական կառույցների կայունության մասին: Կենտրոնական բանկն էլ պարբերաբար հորդորներ է հղում ֆինանսական կառույցներին եւ վարկեր ունեցող քաղաքացիներին:

Ներկայացնում ենք այն բանկերի ցանկը, որոնք արդեն իսկ վարկ ունեցող որոշ շերտերի համար արձակուրդներ են սահմանել:

Հայաստանում վարկ տրամադրում են բանկերը եւ վարկային կազմակերպությունները: Գործող բանկերը 17-ն են, իսկ վարկային կազմակերպությունները՝ 43-ը:

**Արձակուրդ են սահմանել հետեւյալ բանկերը**

- «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ» բանկը մարտի 16-ից մինչեւ ապրիլի 30-ը ներառյալ չվճարված վարկերի նկատմամբ տույժ-տուգանքներ չի կիրառի:
- «Ամերիաբանկ»-ն առաջինը հայտարարեց մարտի 13-ից մինչեւ մայիսի 13-ը ներառյալ վարկային արձակուրդի մասին:
- «Արարատբանկ»-ն իր հաճախորդներին, ըստ ցանկության, մարտի 16-ից՝ երկու ամիս ժամկետով վարկային արձակուրդ կտա:
- «Արդշինբանկը»-ը քաղաքացիների վարկերի նկատմամբ տույժ-տուգանքներ չի կիրառի մինչեւ մայիսի 15-ը, իսկ բիզնեսի համար՝ անհատական մոտեցում կցուցաբերի:
- «Արցախբանկը» մինչեւ մայիսի 1-ը տույժ-տուգանքներ չի կիրառի վարկերի նկատմամբ:
- «Բիբլոսբանկ»-ը մինչեւ մայիսի 16-ն է վարկային արձակուրդ տրամադրել:
- «Ինեկոբանկը» մինչեւ ապրիլի 30-ը ժամկետանց վարկերի նկատմամբ տույժեր չի կիրառի:
- «Հայբիզնեսբանկ»-ը մինչեւ մայիսի 30-ը հետաձգել է ֆիզիկական անձանց վարկերի հերթական մարումները:
- «Հայէկոնոմբանկ»-ը մինչեւ մայիսի 17-ը տուժեր չի կիրառի, բայց հորդորում է եկամուտ ունեցողներին կատարել վարկային պարտավորությունները:
- «Յունիբանկ»-ը վարկերի մարման ազատ գրաֆիկ է սահմանել մինչեւ ապրիլի 14-ը:
- «Էվոկաբանկ»-ը մինչեւ մայիսի 17-ն է վարկային արձակուրդ տվել:
- «Կոնվերսբանկ»-ը հնարավորություն է տվել իր հաճախորդներին անհրաժեշտության դեպքում մինչեւ մայիսի 15-ը հետաձգել վարկերի մարումը:

**Արտոնություն չսահմանած բանկերը**

- «ՎՏԲ» բանկն ընդհանուր արտոնություն չի սահմանել, առաջարկել է անհատական մոտեցում:
- «Մելաթ» բանկն արտոնություն չի սահմանել:
- «Էյչ Էս Բի Սի» բանկն արտոնություն չի սահմանել:
- «Արմսվիսբանկ»-ն արտոնություն չի սահմանել:
- «ԱյԴի բանկ»-ն արտոնություն չի սահմանել:

# «Հովտաշուշան» վեպի այրող հմայքը….



**Ծնունդով մեղրեցի գրող Ներսես Խառատյանը ճանաչված անուն է արդի հայ արձակում: Վաստակաշատ գրողը փարեկան մի քանի գիրք է հրամցնում հայ ընթերցողին: Նրա պատմվածքներն ու նովելները թարգմանվել են մի քանի լեզուներով, իսկ վեպերն արժանացել են գրական հեղինակավոր մրցանակների:**

Ն. Խառատյանն այն եզակի գրողներից է, որ ստեղծագործում եւ հեղինակում է մեծ ու փոքր կտավի գործեր բացառապես ժամանակակից կյանքից, առօրյա ու ամենօրյա թեմատիկայով: Գրողն առավել դյուրին ու համընդհանուր ճանաչման հասնելու համար կարող էր ընտրել պատմական թեմատիկան, կարող էր վեպեր գրել հայոց պատմության հերոսական ու ողբերգական թեմաներով, մանավանդ որ վարպետորեն տիրապետում է մեծ կտավի գործեր ստեղծելու «տեխնիկային»: Սակայն Ներսես Խառատյան գրողը գիտակցաբար չի գնացել դյուրին ուղիով, այլ իր գրականության նյութն ընտրել է ժամանակակից կյանքից:

Գրողի նոր գիրքը, ամենավերջինը՝ օրերս լույս տեսած, կոչվում է «Հովտաշուշան»: Այն ոճական առումով մի նոր, առանձնակի թարմությամբ շնչող գործ է, որը տարբերվում է նախորդ տարիներին հեղինակի հրատարակած մյուս ստեղծագործություններից:

Ներսես Խառատյանի այս նոր գիրքը վերստին աչքի է ընկնում հոգեբանական խորությամբ եւ դրամատիզմով, ինչպես եւ նախորդ գործերը: Վեպի նյութը վերցված է ժամանակակից կյանքից, հերոսներն իրական մարդիկ են, գործողությունների թատերաբեմը մեր երկիրն է՝ Հայաստանը եւ հատկապես գրողի ծննդավայրը՝ չքնաղ ու արեւաշատ Մեղրին: Վեպում արտացոլված են տարբեր հոգեբանական վիճակներ, սակայն շատ համոզիչ, շատ բնական, կարծես «հորինովի» ոչինչ չկա:

Ներսես Խառատյանը կյանքի իրական, պարզ եւ վճիտ ճշմարտություններն է գեղարվեստագրում, բայց այնպիսի գեղեցիկ, սահուն ու հյութեղ լեզվով ու ոճով, որ ցանկանում ես մի շնչով, մի հպումով ծայրեծայր ողջ գիրքը կարդալ:

Արձակագիր, մարդկային հոգու նրբին թարգման Ներսես Խառատյանը թեեւ գրում է առօրյա-ամենօրյա կյանքի մասին, սակայն նրա ասելիքն առօրեական ու սովորական չէ բնավ:

Մարդկային առողջ փոխհարաբերությունները կառուցելու, հոգեկան ու բարոյական ճշմարտացի սկզբունքները որդեգրելու, կյանքում արդարացի ռիթմ ու կենսաձեւ հաստատելու շուրջն է գրողն օգտակար ու հույժ արդիական երկխոսություն սկսում ընթերցող հասարակայնության հետ:

Վեպը ստեղծված է բացառիկ հետաքրքիր պատմության հենքի վրա: Վեպի հերոսներին շաղկապողն ու սյուժեն մշտապես հարստացնողն ու լրացնողը նորին մեծություն Սերն է: Կյանքի սովորական ռիթմը սիրո ելեւէջումների ներքո փոխում է իր միակերպ ընթացքը, դառնում անկանխատեսելի ու անվերծանելի: Կյանքի ձանձրալի թվացող իրականության հեքիաթն ամբողջովին ու աննկատ փոխակերպվում է սիրո հավերժական հեքիաթի: Սիրո ավյունով լցված հերոսներն ամեն օր ու ամեն ժամ նորոգում են կյանքի ընթացքն ու իմաստը: Վեպի ամեն մի էջն ընթերցողին տոգորում է անհագ հետաքրքրությամբ: Նոր փակագծեր են բացվում, նոր պատմություններն են հունցվում, սիրո խորունկ ելեւէջներով կյանքի ճշմարտությունն է հորդում: Եվ այդ ամենի առանցքում շուշանի կամ Հովտաշուշանի լեգենդի հետ կապված միֆական պատմությունն է. *«Պատմում են, օրինակ, թե իբր երիտասարդ ռազմիկը մարտի մեկնելուց առաջ սիրած աղջկան մարգարտյա մի վզնոց է նվիրում… Որոշ ժամանակ անց, երբ աղջիկն իմանում է, որ սիրած տղան մարտում զոհվել է, ընկնում է խոտածածկ մարգագետնին ու սկսում աղեկտուր լաց լինել… Վշտից իրեն այնպես կորցրած է լինում, որ չի էլ նկատում, թե ինչպես է սիրելիի տված վզնոցն այդ ընթացքում կտրվում ու ցիրուցան լինում խոտերի մեջ: Աղջկա սրտակեղեք հեկեկոցներից ազդված ու տեսնելով նաեւ գետնին շաղ եկած փայլփլուն մարգարիտները, Աստված, խղճալով նրան, սիրած տղայից մնացած այդ՝ գին չունեցող քարերը, որպես հիշատակ, դարձնում է ճերմակ, հրաշք ծաղիկներ, որոնց գլխիկները հավիտյանս խոնարհ ու մշտապես լուռ ու մունջ՝ տխուր հակված են դեպի վար…»:*

Ահա այսպիսի հուզիչ պատմություն է ընկած սույն վեպի առանցքում, վեպ, որը կարդացվում է մեկ շնչով, որը բացի գեղարվեստական անուրանալի գրավչությունից եւ հմայքից, ընթերցողի միտքն ու հոգին սնում է նաեւ հոգեկան, իմացական ու բարոյական անժխտելի կենսահյութով:

Այն կարծես թե ժամանակակից կյանքի, ժամանակակից անհատի խոհերի, ապրումների, հոգեւոր լիցքերի եւ խորհուրդների յուրօրինակ հանրագիտարան լինի:

**Արմեն Կարապետյան**
**Պատմաբան, գրող-հրապարակախոս, բանաստեղծ**

# Մահացել է Արցախի հերոս Արթուր Աղաբեկյանի որդին



Քաղցկեղից մահացել է գեներալ-լեյտենանտ, Արցախի հերոս Արթուր Աղաբեկյանի որդին՝ Մխիթար Աղաբեկյանը:

Նա ղեկավարում էր տեքստիլի արտադրությամբ զբաղվող «Սարտեքս» ընկերությունը Ստեփանակերտում:

Նշենք, որ նա հանդիսանում էր «Սարտեքս» ընկերության գործադիր տնօրենը, որի բացման արարողությունը Երեւանում եղել էր 2019 թվականի նոյեմբերին:

«Սյունյաց երկրի» խմբագրակազմը ցավակցում է Արթուր Աղաբեկյանին՝ ծանր կորստի՝ սիրելի որդու՝ Մխիթար Աղաբեկյանի ողբերգական մահվան կապակցությամբ:

# Դրական փոփոխությունները մեր աչքի առաջ են

Շատ ժամանակ չէ, ինչ Գեւորգ Փարսյանը պաշտոնավորում է որպես Կապանի համայնքապետ, բայց արդեն առկա են այն դրական փոփոխությունները, որ կատարվել եւ կատարվում են մեր քաղաքում: Նախ՝ այլեւս չենք տեսնում պռնկեպռունկ լցված աղբարկղեր, քանի որ, ըստ ամենայնի, սահմանված է աղբահանման հստակ ժամանակացույց: Նաեւ նկատել եմ, որ մաքրվում են քաղաքի հեղեղատարները: Այդ առումով մի գլոբալ խնդրի մասին ուզում եմ քիչ ավելի հանգամանորեն խոսել: Խոսքը Ողջի գետի հունի մաքրման մասին է: Կապանի հացի գործարանից մինչեւ մսի կոմբինատ ընկած հատվածում գետի հունի մեջ օրեր ի վեր մի քանի միավոր տեխնիկա էր աշխատում, հեռացվում էին ոչ միայն ջրաբերուկները՝ կենցաղային ու շինարարական աղբը, այլեւ հունի մեջ եղած վայրած ծառերն ու թփերը: Բարեկարգվել է Դավիթ Բեկի հուշարձանի մերձակայքը, որտեղ նաեւ ծառատունկ է արվել: Դե իսկ քաղաքի վերակառուցված կանգառների մասին քանիցս նշվել է: Այժմ մի առանձին հաճույք է զբոսնել Ողջի գետի աջափնյա մայթով, որ եւս վերջերս է վերակառուցվել-բարեկարգվել:

Օրերս անկեղծ զրույցի բռնվեցի հավաքարար մի կնոջ հետ, հետաքրքրվեցի, թե ո՞րն է պատճառը, որ կոմունալ տնտեսության աշխատակիցներն ավելի պարտաճանաչ են եւ լավ են աշխատում: Նա անկեղծորեն խոստովանեց, որ նոր համայնքապետի ղեկավարության օրոք բարձրացվել է իրենց աշխատավարձը: Ասել է թե՝ նյութական շահագրգռությունը բարձրացրել է նրանց պատասխանատվությունը:

Ինչեւէ, փոքր-ինչ չենք կասկածում, որ առաջիկայում մեր քաղաքում նոր դրական փոփոխություններ կլինեն:

**Գ. Ավետիսյան**
**Կապանի Բարաբաթում թաղամասի բնակիչ**

# Երբ բացակայում է կենցաղավարության տարրական կուլտուրան

Մարզկենտրոնի Շինարարների թաղամասից սկիզբ առնող եւ Գարեգին Նժդեհի հուշահամալիր հասնող հեղեղատարը ձմռան ամիսներին լցված էր շինարարական եւ կենցաղային աղբով (ավելի շուտ՝ առաջինով): Շուտով գարնանային հորդ անձրեւներ կլինեն, եւ անձրեւաջրերը հեղեղատարով հոսելու փոխարեն լցվելու են մոտակա անհատական շենքերի տնամերձերը, նաեւ վնասելու են Ներքին Վաչագան թաղամասի հողածածկ ճանապարհը՝ դժվարանցանելի դարձնելով մեքենաների երթեւեկությունը:

Նման վիճակը կանխելու համար դիմեցի, «Կապանի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի ղեկավարությանը: Հիմնարկի աշխատակիցներն օպերատիվ հեռացրին աղբը, ինչպես նաեւ տարածքում կատարեցին սանմաքրման աշխատանքներ: Շնորհակալ եմ կոմունալ տնտեսության աշխատակիցներին, ինչպես նաեւ անպատասխանատու բնակիչներին ուզում եմ հիշեցնել, որ հեղեղատարն աղբաման չէ, այն կառուցված է, որպեսզի այդտեղով հոսեն անձրեւից ու ձնհալքից առաջացած ջրերը եւ չվնասեն շրջակայքը:

Աղբը մի նետեք՝ուր պատահի, մի քիչ ձեզ նեղություն տվեք եւ այն գցեք աղբարկղը: Մանավանդ որ վերջին մեկուկես տարում բոլորս ենք տեսնում, թե որքան է մեր քաղաքում բարելավվել աղբահանությունը:

**Գոհար Ավանեսյան**
**Ներքին Վաչագան թաղամասի բնակչուհի**

# Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճռով

**Հերքում**

21.11.2016 թվականին ՀՀ վարչապետի խորհրդական Գեւորգ Մուրադյանին եւ ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանին ուղղված նամակում «Գորիսի պետական քոլեջ» պետական ոչ առեւտրային կազմակերպության տնօրեն Կարեն Սամվելի Լազարյանի վերաբերյալ տեղ գտած «Ուսանողների զգալի մասին թոշակ չեն տալիս, տնօրինությունը պահում է իրեն», «Տնօրենի եւ ուսմասվարի նախաձեռնությամբ դասախոսների վրա գրվում է ավել դասաժամեր՝ գումարը հետ վերցնելու ակնկալիքով, իսկ ով չէր համաձայնվում աշխատանքից ազատվում է», «Քոլեջում գրված է նրանց բարեկամների անունները՝ իբրեւ աշխատողներ, սակայն նրանք երբեւիցե աշխատանքի չեն ներկայացել» տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը:

**Սամվել Միշայի Ղուկասյան**
**09.03.2020 թ.**



**Հերքում**

26.10.2016 թվականին ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանին ուղղված նամակում «Յուրաքանչյուր կուրսի դասամատյանում հրամանագրված եւ գրանցված է 15-20 ուսանող, սակայն դասի են հաճախում յուրաքանչյուր կուրսում 3-4 ուսանող, մնացածը, պայմանավորվածության համաձայն դասի չեն գալիս, կրթաթոշակը ստանում են իմ կարծիքով գանձապահը կամ տնօրենը, քոլեջի հաստիքացուցակում կան գրանցված անուններ, որոնց ոչ ոք չի ճանաչում, բայց նրանք աշխատավարձ են ստանում, տնօրենը չարաշահում է իր պաշտոնեական դիրքը, ոտնահարում է մարդու իրավունքները, յուրացվում են կրթաթոշակները, Կարեն Լազարյանը շարունակում է վայելել պետական բյուջեն, Կարեն Լազարյանն իր պահվածքով եւ անօրինական գործունեությամբ 80-ամյա պատմություն ունեցող մանկավարժական հաստատությունը դարձրել է իսկական «առեւտրի սրահ» տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը:

**Համիկ Միշայի Ղուկասյան**
**09.03.2020 թ.**


**Սյունյաց Երկիր**

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
**«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»**
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47**
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1030, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 18.02.2020թ.: